ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 334 L

16. Հոկտեմբեր 2023թ.

ք.Արտաշատ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2024-2026Թ.Թ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ 2024Թ. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՏԵՍԱԿԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանի 105-րդ կետով.

1. Սահմանել ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի 2024-2026թթ. ռազմավարական և 2024թ. տարեկան ծրագրերը կազմելու գործընթացում կիրառվող չափորոշիչների ցանկը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Восстановимая подпись

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՐՏԱՎԱԶԴ

Подписано: NAZARETYAN ARTAVAZD 2409881092

Ա.ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզպետի
«16» հոկտեմբեր 2023թ.
թիվ 334-որոշման

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի 2024-2026թվականների ռազմավարական և 2024 թվականի տարեկան ծրագրերը կազմելու նպատակովռիսկերիվերլուծության գործընթացում կիրառվող չափորոշիչների ցանկը

N	Չափորոշչի տեսակը	Տեսակը	Չափորոշչի նկարագրությունը
1	Նշանակալիություն	Ընտրանքային	Գործակցի սահմանման համար հիմք է հանդիսացել ներքին աուդիտիաշխատանքային խմբի կողմից իրականացված վերլուծությունները և ուսումնասիրությունները
2	Նախորդ տարվա ընտրանքի արդյունքներ	Պարտադիր	Ներքին աուդիտի ծառայությունը նախորդ տարվա ընտրանքի արդյունքների հետ կապված գործակիցը սահմանվում է 1) 0.5- եթե միավորը նախորդ տարում ընդգրկվել է աուդիտի ընտրանքում, 2) 1-եթե միավորը ընդգրկվել է ընտրանքում ռազմավարական ծրագրի առաջին տարում սակայն չի ընդգրկվել նախորդ տարում, 3) 1.5-եթե միավորը չի ընդգրկվել ռազմավարական ծրագրում
3	Փոփոխությունների մակարդակ-ՆԱ աշխատանքային խմբի կողմից նախնական	Ընտրանքային	Գործակիցը սահմանվում է յուրաքանչյուր ստորաբաժանման/աուդիտի միավորի գործառույթները կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում՝ հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում

	գնահատումներ		իրականացված աուդիտորական առաջադրանքների արդյունքները և մնացորդային ռիսկերը
4	Հայտնաբերվածթերացումներ	Ընտրանքային	Գործակցի սահմանման համար հիմք են հանդիսանում 2022թ. ընթացքում տվյալ ստորաբաժանման/գործառույթի աուդիտի (այլ ստուգող, հաշվեքննություն իրականացնող մարմինների կողմից կատարված աշխատանքների արդյունքներով) իրականացման արդյունքներով արձանագրված թերացումների/անհամապատասխանությունների կարևորության աստիճանը (հիմնական, ոչ հիմնական, միջին, ցածր)
5	Ղեկավարի համար առաջնահերթություն (Ստացված արձագանք)	Ընտրանքային	Գործակցի սահմանման համար հիմք են հանդիսացել ՀՀ Արարատի Մարզպետիհետ հանդիպման/քննարկման արդյունքում վերջինիս կողմից նախանշված թիրախները